

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՔԻ ՌՈՒՔՈՎԻՆԱ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ուայկական պետութիւնք հնագոյն ժամանակներէ վեր ներքին Ասիայէն եւ Ափրիկէէն եկող աղգայնութեանց ասպարէզ էին: Մղոււք, Եգիպտացիք, Պարսիկք, Տաճիկք եւ Թաթարք արշաւեցին այս երկիրներն, աւար առին, աւերեցին եւ նաեւ ատեն ատեն տիրապետեցին:

Այս անմարդավայել անգթութիւններէ զերծանելու նպատակաւ, այլեւայլ ժամանակներ Հայոցմէ շատերն իրենց հայրենիքէն մեկնեցան, իրենց ինչքն ու ստացուածքն անյագ տիրապետողներու թող տալով, ուրախութեամբ՝ որ լոկ իրենց կեանքն աղատել կարող եղան, աշխարհիս ամէն կողմը ցրուեցան, եւ երբ նաեւ Հայոց մայրաքաղաքն Անի 1313ին երկրաշարժէ կործանեցաւ, եւ յետոյ 1378ին Եգիպտացւոց ձեռքն ինկաւ, թէեւ Հայք քաջութեամբ եւ երկայն ատեն ընդդիմացան, եւ երբ վերջին հայ թագաւորն Վեռն Զ Գաղղիա փախած էր իւր թշնամեաց դէմ օգնութիւն փնտռելու համար, այն ատեն Հայոցմէ հազարաւորներ փախան եւ